

ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ

Ձինուորին համար քաջուկներն է ոչ թէ պատերազմ մղելը, այլ՝ թշնամիին յաղթելը: Ով որ խաղաղ ատեն իր քաջուկեամբ կը պարծենայ, պատերազմի ժամանակ շուտով փախուստի կը դիմէ: Երկրի վրայ մարդուն կեանքը պատերազմ է, եւ յաղթողներն են մրցանակին տիրացողները: Արդ, կայ մարդ, որ ինքն իր հետ կը մարտնչի, ուրիշ մը՝ աշխարհի հետ. մէկը կը յաղթէ, միւսը կը պարտուի: Արդարեւ, մարդ ինքն իրեն կը յաղթէ՝ երբ կը նուաճէ իր անկարգ բաղձանքները. աշխարհին կը յաղթէ՝ երբ կ'արհամարհէ փառքն ու հարստութիւնը, մարդուն կը յաղթէ՝ երբ ամենուն բարիք կը գործէ ու կը համբերէ անիրաւ մարդոցմէ ընդունած վնասներուն: Իսկ ինքն իրմէ կը պարտուի՝ երբ մարմնի ցանկութիւնները կը կատարէ, աշխարհէն կը պարտուի՝ երբ փառքին ու հարստութեան կը ծառայէ, մարդոցմէ կը պարտուի՝ երբ չարը չարով կը հատուցէ: Ուրեմն ջանանք ամէն ինչի մէջ յաղթող ըլլալ, որպէսզի փառքի պսակը ընդունինք:

Մարմինի կեանքը՝ հոգին է եւ հոգիի կեանքը՝ կենդանի հաւատքը: Հաւատքի կեանքը՝ սէրն է եւ սիրոյ կեանքը՝ յոյսը: Յոյսի կեանքը՝ Աստուծոյ խոստումն է եւ խոստումի կեանքը՝ Աստուծոյ նկատմամբ ճշմարտութիւնն է: Ուրեմն ամուր բռնենք հաւատքի ճշմարտութիւնը, որուն միջոցաւ ճշմարիտ Աստուած կը ճանչնանք, կը սիրենք ու կ'ակնկալենք աներեւոյթ պարգեւները, որ խոստացաւ շնորհել անոնց՝ որոնք հաւատքով, յոյսով ու սիրով կը ծառայեն իրեն:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈԳԻՆԵՐԸ, ԳԵԻԵՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ԳԻՏԱՆԿԻՒՆԷՆ

ՈԳԵՀԱՐՑՈՒԹԵԱՆՄԱՍԻՆ

Կինը կը բողոքէ, որ մինչեւ հիմա չէ ձեռագատուած Սատանային շղթաներէն: Քոյր մը, որ իրեն կ'այցելէր, կը հարցնէր՝ թէ արդեօք տակաւին պիղծ ուժերուն կապուած չէ՞: Հարկաւ, անիկա տակաւին Սատանային ազդեցութեան տակ կը գտնուի: Ահա Սուրբ Գիրքին վկայութիւնը. «Այդ բաներով զբաղող ամէն ոք գարշելի է Աստուծոյ աչքին»:

ԳԱԽԱԹ ԴԱՐՁՆԵԼ

Պեռ ինչն ստացուած նամակի մը մէջ կը կարդանք գաւաթ դարձնելուն եւ անոր հետեւանքներուն մասին: «Ես ու կինս ծանօթներէն լսած ենք գաւաթ դարձնելու մասին: Մենք գիտենք, որ ոգեկանչութիւնը Սատանայէն է, եւ ատով չզբաղեցանք: Բայց ասիկա մեզի համար նոր բան մըն է: Թուղթի վրայ Այբուբենը գրուած էր, եւ գաւաթը կը շարժէր մէկ տառէն միւսը: Այն հարցումին՝ թէ ո՞վ է մեզի հետ խօսողը, մեռած հոգիներու անունները կը տրուէին: Եւ այդպէս, սենեակին մէջ ներկայ եղողները իրենց հարցումներուն պատասխանները ստացան:

«Երկուքս ալ ուզեցինք գիտնալ, թէ ինչ թաքուն ուժ կայ այդտեղ: Մենք արդէն գԱստուած գտեր էինք եւ չար ոգիներէն պաշտպանուած կը զգայինք: Այո՛, կը փնտռէինք գԱյն՝ մեր Տէրը, բայց ոչ՝ մաքուր սրտով. այլապէս մեզքի մէջ պիտի չիյնայինք...»

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ



ՔՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՏԵՐՈՂՄ ԵՆԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՂՄ ԼՈՅՍ (Ս., 119-105)

Ե. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ՝ 2 ԴԵՎՏԵՄԲԵՐ, 2012 ԹԻՒ 49

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԼՍՏ ՂՈՒԿԱՍԻ 13.1-9

Բ.ՅԻՍՆԱԿԻ

Ոմանք եկան Յիսուսի եւ պատմեցին այն գալիլիացիներուն մասին, որոնք Պիղատոսի կողմէ սպաննուեցան, երբ Աստուծոյ զոհ կը մատուցանէին: Յիսուս անոնց ըսաւ. «Կը կարծէ՞ք թէ սպաննուող գալիլիացիները միւս բոլոր գալիլիացիներէն աւելի մեղաւոր էին, որ այդպիսի վախճան մը ունեցան: Ո՛չ: Կ'ըսեմ ձեզի, որ եթէ չապաշխարէք՝ դուք բոլորդ ալ նոյնպէս պիտի մեռնիք: Կամ ի՞նչ կը մտածէք այն տասնութ մարդոց մասին, որոնց վրայ ինկաւ աշտարակը Սելովամի մէջ եւ սպաննեց զանոնք: Անոնք աւելի՞ յանցաւոր էին քան Երուսաղէմի բոլոր բնակիչները: Ո՛չ: Կ'ըսեմ ձեզի, որ եթէ չապաշխարէք՝ բոլորդ ալ նոյնպէս պիտի մեռնիք»:

Անոնց հետեւեալ առակը պատմեց. Մարդ մը կար որ իր այգիին մէջ թզենի մը տնկած էր: Երբ ժամանակը եղաւ, թուզ քաղելու գնաց, բայց թզենիին վրայ պտուղ չգտաւ: Այգեպանին ըսաւ. «Այս երրորդ տարին է որ կու գամ թուզ քաղելու, բայց չեմ գտներ: Ուստի կտրէ՛ գայն, ինչո՞ւ անիմաստ կերպով տեղ գրաւէ»: Այգեպանը պատասխանեց. «Տէ՛ր, թող այս տարի ալ մնայ. ես իր շուրջի հողը կրկին կը փորեմ եւ պարարտացուցիչ կը դնեմ: Այս ձեւով թերեւս պտուղ տայ. ապա թէ ոչ՝ գալ տարի կտրէ գայն»:

ԽԱՂԱՂ ԿԵԱՆՔ ԽՆԴՐԵԼՈՒ ԱՂՕԹՔ

Կեանքի առաջնորդող եւ խաղաղութիւն պարգեւող մեր Աստուածը, Քրիստո՛ս, դո՛ւն առաջնորդէ մեզ, որպէսզի արդարութեան քու ճամբաներէդ քայլենք եւ քու ողորմութեամբդ՝ խաղաղութեամբ հասնինք կեանքի եւ փրկութեան նաւահանգիստը. որովհետեւ դո՛ւն ես մեր օգնականն ու փրկիչը: Քեզի՛ կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւը, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

Ս. ԹԱՂԷՆՍ ԵՒ Ս. ԲԱՐԹՈՂԻՄԷՆՍ ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ ՏՕՆ

Ամեն տարի Դեկտեմբեր ամսուան ընթացքին կը յիշատակուի Յիսուսի առաջին աշակերտներէն՝ Ս. Թաղէոս եւ Ս. Բարթողիմէոս առաքելներուն տօնը: Անոնք Հայաստանի մէջ Քրիստոնէութեան փարոսները սկսած են կատարել առաջին դարէն սկսեալ, Յիսուսի համբարձումէն ետք:

Հայաստանը այդ օրերուն կը նկատուէր կարեւոր եւ բազմամարդ երկիր: Ս. Թաղէոսի եւ Ս. Բարթողիմէոսի կը վիճակուի Հայաստանէն ներս Քրիստոնէութիւնը տարածելու դժուար գործը, տրուած ըլլալով, որ այդ տարիներուն հայ ժողովուրդը բազմաստուածեան կրօն ունէր:

Ո՞Վ ԷՐ Ս. ԹԱՂԷՆՍ

Յիսուսի 12 աշակերտներէն մէկն է: Յայտնի չէ թէ երբ ծնած է, բայց նահատակուած է իր փարոզական առաքելութեան նամբուն վրայ շուրջ 46 թուականին:

Թաղէոս առաքել կը յաջողի քրիստոնէութեան կրօնը տարածել հայոց արքունական պալատէն ներս քրիստոնէայ մկրտելով Սանդուխտ կոյսը, որ Սանատրուկ թագաւորին աղջիկն էր: Թագաւորը կը փորձէ իր աղջիկը վերադարձնել փոքր տարեկան պաշտամունքին եւ ձախողելով սպաննել կու տայ թէ՛ Սանդուխտ կոյսը, թէ՛ Թաղէոս առաքելը: Մինչ այդ Արտագ գաւառի բնակչութիւնը, հետեւած ըլլալով Ս. Թաղէոսի փարոզութեան, անոր յիշատակին կը հիմնէ Թաղէի վանքը շուրջ 66 թուականին, որ դարերու ընթացքին կը դառնայ հայ ժողովուրդի հոգեւոր կեդրոններէն մէկը:

Ո՞Վ ԷՐ Ս. ԲԱՐԹՈՂԻՄԷՆՍ

Բարթողիմէոս Յիսուսի 12 աշակերտներէն մէկն էր: Անոր կը տրուի նաեւ Նաթանայէլ անունը, որ կը նշանակէ «Աստուծոյ Նուէր»:

Ան քրիստոնէութիւնը փարոզած է Հնդկաստանի, Պարսկաստանի, Արաբիոյ եւ Հայաստանի մէջ: 66 թուականին տեղի ունեցած է իր նահատակութիւնը:

Բարթողիմէոս կը նկատուի Ս. Թաղէոս առաքելին հետ Հայաստանի մէջ քրիստոնէութեան առաջին փարոզը:

Առաքելը Հայաստանի մէջ իր փարոզական աշխատանքը սկսած է Գողթան գաւառէն, ապա Սիւնեաց, Արարատեան եւ Վասպուրական նահանգներուն մէջ: Ան կը յաջողի նաեւ հայոց արքունի շրջանակներէն ներս ալ փարոզութիւն կատարել: Քրիստոնէայ կը մկրտէ Սանատրուկ թագաւորին ֆոյրը՝ Ոգուհին եւ հազարապետ Տերենտիոսը: Հետեւանք այն կ'ըլլայ, որ թագաւորը սպաննել կու տայ թէ՛ ֆոյրը, թէ՛ հազարապետը, թէ՛ առաքելը:

Հայ ժողովուրդը ի յիշատակ Ս. Բարթողիմէոսին, չորրորդ դարուն Վասպուրականի Աղբակ գաւառին մէջ կը շինէ վանք մը, որուն չորս աւանդատներէն մէկուն մէջ գոյութիւն ունի տապանաքար մը, վրան արձանագրուած թէ հոն թաղուած է Ս. Բարթողիմէոս Առաքելը:

Վանքը ներկայիս կիսաւեր վիճակի մէջ է:

Շնորհիւ Ս. Թաղէոս եւ Ս. Բարթողիմէոս առաքելներուն Հայաստանեայց մայր եկեղեցին **ԱՌԱՔԵԱԼԱՎԱՆ** կը կոչուի Յիսուսի առաքելներու նախաձեռնութեամբ հիմնուած ըլլալուն համար:

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ ՃՇՄԱՐԻՏ

ԻՍՄՅՈՒՄԸ

Հարստութիւնդ եթէ Աստուծոյ առիթը, վստահ եղի՛ր եւ հաւատա՛, որ զաւակիդ կրկին առատութեամբ կու տայ եթէ ուզես: Պիտի ըսես, ինչպէ՞ս եթէ ուզեմ: Ինչ որ Աստուծոյ պարգեւ առիթը եւ ունիս դարձեալ Աստուծոյ պարգեւէ, իսկ զաւակիդ բարեպաշտութեանդ օրինակը ձգէ եւ ոչ թէ հարստութիւնդ: Աղքատներու երամին ըրած գթութեանդ անոր վերակացու ձգէ Աստուծոյ անսահման գթութիւնը եւ ոչ թէ փայլուն ոսկին: սորվեցո՛ւր ողորմութեան բարիքը եւ ոչ թէ տմարդութեան չարիքը: սորվեցո՛ւր զԱստուծոյ պաշտել եւ ոչ թէ մամոնան: սորվեցո՛ւր երկնաւոր բաներու ցանկալ եւ ոչ թէ երկրաւորներուն: վարժեցո՛ւր պատուասէր ըլլալ երկնային պատիւին եւ ոչ թէ մեր սին կեանքի ծաղկաթափ փառքին: սորվեցո՛ւր սիրել թէ առօրեայ կեանքը՝ անցաւորը, որ լի է դառնութեամբ, թշուարութեամբ, այլ կայունը, մնայունը եւ բիւրապատիկ հանգիստով լեցուն: Իսկ եթէ անիրաւութենէ, զրկանքներէ հաւաքած հարստութիւնդ զաւակներուդ պիտի թողուս, զիտցի՛ր եւ հաւատա՛ թէ ուր որ անիրաւութիւն եւ զրկանք կայ, հոն Աստուծոյ բարկութիւնը կը գտնուի:

Սարգիս Շնորհալի (Յորդորակներ)

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԳԱՏՈՒ

ՔՈՒ ՄԵԾԱԳՈՅՆ ԲԱԳՉԱՆՔԳ

Աստուած է, որ ձեր մէջ կը ներգործէ կամենալը եւ ընելը իր հաճութեան համար: (Փիլիպպեցիս 2:13)

Հետեւեալ խօսքը շատերու կողմէ որդեգրուած սկզբունք մըն է. «Եթէ որեւէ բան քեզի հաճոյ կը թուի, ըրէ՛ առանց վարանումի»: Այս կը նշանակէ, թէ հաճոյքը ինքնին սխալ չէ՝ բայց կրնայ առաջնորդել բարոյական ու հոգեւոր քայքայումի, եթէ Աստուծոյ հոգին չկառավարէ մեզ:

Նկատի առնենք մարդ արարածի բնական փափաքը զգացական եւ ֆիզիքական մտերմութեան նկատմամբ: Բոլորս ալ կարիքը ունինք անոր: Սակայն եթէ այնպէս պատահի, որ անձի մը ամուսնական կեանքին մէջ այդ մտերմութեան կարիքը գոհացում չի գտներ՝ գայն ուրիշ տեղ փնտռելը կ'առաջնորդէ սխալ ճամբաներու եւ հոգեկան ու բարոյական քայքայումի: Բնական է փնտռել հաճոյքը եւ խուսափիլ ցաւէն: Հետեւաբար դիւրին է ընդունիլ այն գաղափարը, թէ ինչ որ հաճոյք կը պատճառէ չի կրնար սխալ ըլլալ: Բայց չմոռնանք որ մեր զգացումները ապահով առաջնորդներ չեն:

Քանի որ մենք մեղանշական բնութիւն ունինք, մեզի համար անհրաժեշտ է ունենալ փափաք մը, որ աւելի բուռն ըլլայ քան՝ մեր ուրիշ փափաքները: Այս փափաքը մեր մէջ յառաջ կուգայ երբ հաւատանք Յիսուս Քրիստոսի եւ Աստուծոյ հաճելի կեանք մը ապրիլը դառնայ մեր բուռն փափաքը: Այս փափաքը կրնայ մեղմանալ կեանքի պարագաներուն տակ, բայց Աստուած մեր մէջ կը ներգործէ «կամենալը եւ ընելը իր հաճութեան համար»: Արդեօք ի՞նչ է քու մեծագոյն փափաքը:

Երբ կը բաղձաս Աստուծոյ հաճելի ըլլալ, որէ՛ ինչ որ կրնաս:

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ

36.22--37.11

Քեղկիայի որդի Եղիակիմը, որ արքունի հազարապետն էր, հրովարտակներու քարտուղար Սոմնասը եւ Ասափի որդի Յովաքը, որ արձանագրութիւն պահող քարտուղարն էր, իրենց վերարկուները պատուած՝ եկան Եզեկիա թագաւորին մօտ, եւ Սենեքերիմի հրամանատարին խօսքերը փոխանցեցին:

Եզեկիա երբ լսեց՝ իր հազուատները պատուեց, քուրձ հագաւ եւ ելաւ Տիրոջ տաճարը գնաց, եւ Եղիակիմ հազարապետը, քարտուղար Սոմնասն ու տաճարի քահանաներէն ծերերը, բոլորն ալ քուրձ հագած, զրկեց Ամոսի որդի Եսայի մարգարէին քով, որպէսզի անոր ըսեն. «Եզեկիա այսպէս կ'ըսէ.՝ "Այօր սուգի, նախատինքի, կշտամբանքի եւ բարկութեան օր է: Ծննդական կնոջ պէս՝ երկունքը բռներ է մեզ, բայց ոյժ չունինք ծնանելու: Թող քու Տէր Աստուածդ լսէ թէ ինչ կ'ըսէ Ասորեստանի թագաւորին հրամանատարը, որ իր տիրոջ կողմէ զրկուեցաւ կենդանի Աստուածը նախատելու ա՛յն նախատական խօսքերով, որ քու Տէր Աստուածդ լսեց: Արդ, հարցուր քու Տէր Աստուծոյդ, ի՞նչ պիտի ըլլայ մնացողներուս վիճակը"»:

Երբ Եզեկիա թագաւորին ծառաները Եսայիի քով եկան, Եսայի ըսաւ անոնց. «Հետեւեալը ըսէք ձեր տիրոջ.՝ Այսպէս կ'ըսէ Տէրը. Մի՛ վախնար այն խօսքերէն որ լսեցիր եւ անոնցմով Ասորեստանի թագաւորին պատգամաւորները գիտախտեցին: Ահաւասիկ ես անոր հոգին պիտի խռովեմ այնպիսի լուրով մը, որ ստանալուն պէս իր երկիրը պիտի վերադառնայ եւ հոն սուրով պիտի սպաննուի»:

**Շարունակել
Աստուածաշունչէն**

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ
ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐՈՒՆ**

4.1-11

Այսպէս ուրեմն, եղբայրներ, մենք ձեզի սորվեցուցինք թէ ինչպէս պէտք է ապրիլ Աստուծոյ հաճելի ըլլալու համար: Թէեւ այդպէս կ'ապրիք արդէն, սակայն կը խնդրենք եւ Տէր Յիսուս Քրիստոսի անունով կը թելադրենք որ շարունակէք յառաջանալ ներկայ ձեր ընթացքին մէջ: Գիտէք թէ ինչ պատուէրներ սուկինք ձեզի Տէր Յիսուսի անունով, որովհետեւ Աստուծոյ կամքն է որ դուք սրբուիք եւ ամենեւին հեռու մնաք պոռնկութենէ: Զեզմէ իւրաքանչիւրը թող սրբութեամբ ու պատուով ամուսնանայ: Կրքոտ ցանկութիւններու անձնատուր մի՛ ըլլաք հեթանոսներուն պէս, որոնք զԱստուած չեն ճանչնար. կամ չըլլայ որ մէկը եղբօր մը դէմ մեղանչէ անոր կինը յափըտակելով, որովհետեւ այդ բոլորին համար Տէրը իր դատաստանին մէջ անողոք պիտի ըլլայ, ինչպէս սկիզբէն ըսինք ձեզի եւ ազդարարեցինք: Միթէ Աստուած մեր պղծալից կեանքը շարունակելու հրաւիրեց մեզ, թէ սրբութեամբ ապրելու: Անշուշտ թէ սրբութեամբ ապրելու: Հետեւաբար ով որ սրբութեան այս պատուէրը կ'արհամարհէ՝ մարդ մը անարգած չ'ըլլար, այլ նոյնինքն զԱստուած, որ իր Սուրբ Հոգին կուտայ մեզի:

**ՀԱՐՈՒՆԱԿԵԼ
ԸՆԹԵՐԹՄԱՆՈՒԹԻՒՆԸ
ՄԱՍՈՒՄԾԱՇՈՒՄԸ**